


ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



Քաղաքացիական հասարակության զարգացման միություն ՀԿ

ԵՐԵՎԱՆ 2002

Ներկայացվող ժողովածուն անդրադառնում է  
յրեղեկարվության ազարության իրավական խնդիրների  
կարգավորմանը Նայաստանում՝ տերմինաբանությանը,  
ընդհանուր օրինաստեղծությանը, գաղտնիության ու  
յրեղեկարվության ազարության փոխհարաբերությանը:

Նարուկ շնորհակալություն ենք հայտնում ՆՆ  
Ազգային Ժողովի պետական իրավական հարցերի  
մշակական հանձնաժողովի փորձագետ *Կարսպետ  
Նարությունյանին*, որը կարողանում է պրակտիկ  
օրինաստեղծ գործունեությունը հստակ հիմնավորել  
յետական վերլուծություններով:

Շնորհակալություն ենք հայտնում նաեւ մեր մշակական  
հեղինակ *Արտակ Գնունուն*, որի վերլուծությունները  
մանրակրկիտ են եւ հակիրճ:

Նրապարակումը պարաստել է՝ Քաղաքացիական  
հասարակության զարգացման միություն ՆԿ  
հեռ. 3749-403609  
csdu@csdu.am  
www.csdu.am

Խմբագիր՝ Լաուրա Բաղդասարյան

Նրապարակումը կարարվել է «Տեղեկարվության  
ազարության քարոզարշավ» ծրագրի շրջանակներում,  
Միջազգային Զարգացման Բրիտանական Նիմնադրամի  
(DFID) ֆինանսական օժանդակությամբ:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### Կարապետ Զարուբյունյան

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՈՐՈՇ  
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 3

### Կարապետ Զարուբյունյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ  
ՍՏԵՂԾՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՓՆՏՐԵԼՈՒ, ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՏԱՐԱԾԵԼՈՒ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ  
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ 9

### Կարապետ Զարուբյունյան

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԵՒ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 20

### Արտակ Գևունի

ՀԱՅԱՑՔ ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ ՀՀ  
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆԸ 30

## Կարապետ Հարությունյան

### ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՈՐՈՇ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նայաստանի Նանրապետության օրենսդրության մեջ, մամուլում, զանգվածային լրատվության այլ միջոցներում լայնորեն կիրառվում են «տեղեկատվության ազատություն», «տեղեկատվության իրավունք», «տեղեկատվության մատչելիություն» արտահայտությունները, «տեղեկատվություն» բառի հետ կապված իրավաբանական այլ տերմիններ, որոնք ունեն հստակեցման կարիք:

«Տեղեկատվություն» բառն այլ լեզուներից թարգմանաբար փարբեր բովանդակություն ունի:

ա) «Ռուս-հայերեն բառարան»-ում (Ա.Ս. Ղարիբյան) ժուսերեն «*информация*» բառը հայերեն նշանակում է՝

1. Ինֆորմացիա, տեղեկացում, հաղորդում.

2. տեղեկություն, ինֆորմացիա. *газетная информация* – լրագրային ինֆորմացիա. *получить информацию* - ինֆորմացիա ստանալ, *дать информацию* - ինֆորմացիա տալ:

բ) ըստ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»-ի (Երևան 1980)՝

1. Ինֆորմացիա նշանակում է հաղորդագրություն, հաղորդում.

(լատ. informatio - պարզաբանում, լուսաբանում, շարադրանք).

2. «տեղեկատվություն» նշանակում է որևէ բանի մասին տեղեկություն տալը, ստացած (հավաքած) տեղեկությունների հաղորդումը.

3. «տեղեկություն» նշանակում է լուր, ծանուցում, հաղորդում, գիտելիք, ծանոթություն, տվյալ, փաստ:

Իրավաբանական հասկացությունների կամ տերմինների կիրառման կարգը ներկայումս սահմանված է «Իրավական ակտերի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 42-րդ հոդվածում: Այստեղ նշվում է, որ պետք է կիրառվեն նորմատիվ իրավական ակտերում սահմանված կամ հանրաձանոթ հասկացությունները կամ տերմինները (*«Նորմատիվ իրավական ակտն օրենքով նախատես-*

վիճակում՝ Նայասարանի Նանրապետության ժողովրդի, Նայասարանի Նանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը, օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով իրենց լիազորությունների շրջանակում ընդունած պաշտոնական գրավոր այն փաստաթուղթն է, որն ուղղված է իրավական նորմի կամ նորմերի սահմանմանը, փոփոխմանը կամ գործունեության դադարեցմանը», «Իրավական ակտերի մասին» ՏՄ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ կետը): Եթե նորմադիվ իրավական ակտում կիրառվում են նոր կամ բազմիմաստ, կամ էլ այնպիսի հասկացություններ, տերմիններ, որոնք առանց պարզաբանման միանշանակ չեն ընկալվում, ապա այդ իրավական ակտով պետք է տրվեն դրանց սահմանումները:

«*Информация*» ռուսերեն բառի հայերեն սահմանումը տալու համար անհրաժեշտ է խնդիրը դիտարկել միջազգային իրավունքի տեսանկյունից: «Տեղեկատվություն» բառի անհարկի կիրառումը գալիս է նաեւ մարդու հիմնարար իրավունքների եւ ազատությունների, մեր կարծիքով, ոչ ճիշտ ընկալումից:

Այսպես, ՄԱԿ-ի «1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 19-րդ հոդվածում սահմանված է.

«Յուրաքանչյուր ոք ունի կարծիքներ ունենալու, դրանք ազատորեն արտահայտելու իրավունք: Այդ իրավունքը ներառում է սեփական կարծիքն անարգել պնդելու ազատությունը, ցանկացած միջոցներով տեղեկություն փնտրելու, տրանսպորտի եւ տարածելու ազատությունը՝ անկախ պետական սահմաններից»<sup>\*</sup>:

Թվարկված քաղաքացիական եւ քաղաքական իրավունքները «ՄԱԿ-ի 1966թ. Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային պակտ»-ի 19-րդ հոդվածում ավելի լիարժեք են, քան «Նամընդհանուր հռչակագրում»: Այսպես նշվում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն անարգել պնդելու իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունք: Այդ իրավունքը ներառում է ցանկացած ձեւի տեղեկություն եւ գաղափար փնտրելու, տրանսպորտի եւ բանավոր, գրավոր կամ տպագիր միջոցներով, գեղարվեստական ձեւերով կամ ցանկացած այլ միջոցներով տարածելու ազատությունը՝ անկախ պետական սահմաններից»:

<sup>\*</sup> Այս եւ ստորեւ բերվող մյուս թարգմանությունները հեղինակին են:

«1950թ. Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների Եվրոպական կոնվենցիա»-ի 10-րդ հոդվածը սահմանում է՝.

«Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունք: Այդ իրավունքը ներառում է իր կարծիքը պնդելու, փեղեկություն և գաղափարներ փնտրելու, ստանալու և փարածելու ազատությունը՝ անկախ պետական մարմինների միջամտությունից և պետական սահմաններից»:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 24-րդ հոդվածում նշվում է՝

*«Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքը պնդելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել՝ հրաժարվել իր կարծիքից կամ փոխել այն:*

*Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք՝ ներառյալ փեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, փարածելու ազատությունը՝ փեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»:*

Այսպիսով՝ վերը շարադրվածից պարզ է դառնում, որ գոյություն ունի սեփական կարծիքն ազատորեն արտահայտելու կամ խոսքի ազատության իրավունքը, որը ներառում է փեղեկություններ փնտրելու, ստանալու և փարածելու ազատությունը: Եվ ընդհանրապես, խնդրո առարկա «փեղեկատվություն» բառը օգտագործված է միայն ՆՏ Սահմանադրության 24-րդ հոդվածում «միջոցներ» բառի հետ («փեղեկատվական միջոցներ»), ինչը միանգամայն այլ բան է նշանակում:

Պետք է նշել, որ այս վերլուծության նպատակը հայերենում սրուգաբանական հայտնագործություններ անել չէ: Մենք մտավախություն ունենք, թե «փեղեկատվություն» բառի նմանօրինակ կիրառումները կարող են հանգեցնել մարդու հիմնարար ազատություններից մեկի՝ փեղեկություններ փնտրելու, ստանալու և փարածելու ազատության ապահովմանն ուղղված օրենսդրական ակտերի անկատարությանը:

Այդ ազատության լիարժեք ընկալման համար դիտարկենք Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 29-րդ հոդվածը, որտեղ ասվում է՝.

*«1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի և խոսքի ազատության երաշխիք:*

*4. Յուրաքանչյուր ոք ունի ցանկացած օրինական միջոցով*

*ազատորեն տեղեկություն փնտրելու, սրանալու, փոխանցելու, ստեղծելու եւ փարածելու իրավունք»:*

Խոսքի ազատությանը վերաբերող մեկնաբանության մեջ (Յու.Վ. Կուդրյավցեւայի ընդհանուր խմբագրություն), մասնավորապես, ասված է.

«Խոսքի ազատությունը հասարակական, պետական եւ այլ բնույթի հարցերի վերաբերյալ սեփական կարծիքը եւ համոզմունքները բանավոր կամ գրագիր խոսքի միջոցով, ժողովներում, հանրահավաքներում եւ այլ միջոցներով անարգել արտահայտելու հնարավորությունն է, որը երաշխավորված է պետության կողմից: Սեփական կարծիքն արտահայտելու ազատությունը ընկած է այլ իրավունքների (օրինակ, ընտրություններին մասնակցելու, պետիցիայի, խղճի, կրթության, ստեղծագործելու իրավունքի) եւ ազատությունների հիմքում»:

Մարդու մտքերը՝ մարմնավորված նրա կարծիքներում եւ համոզմունքներում, բնութագրում են մարդու ներքնաշխարհը, նրա գիտակցության բովանդակությունը, որոշում են նրա անհատականությունը: Կարծիքը գիտակցության ավելի շարժուն փարթն է: Նամոզմունքները կազմում են հայացքների կայուն մի համակարգ, որը բնութագրում է անհատի արժեքային կողմնորոշումները:

Մտքի եւ խոսքի սահմանադրական ազատությունը նշանակում է ոչ միայն սեփական կարծիքը եւ համոզմունքները անարգել արտահայտելու հնարավորություն, այլեւ դրանց արտահայտումը (կամ դրանցից հրաժարումը) հարկադրելու անթույլատրելիություն:

Սեփական կարծիքն արտահայտելու ազատությունը ներառում է ցանկացած օրինական միջոցով ազատորեն տեղեկություն փնտրելու, սրանալու, փոխանցելու եւ փարածելու յուրաքանչյուրի իրավունքը: Տեղեկությունների ազատության այդ իրավունքը կարող է իրականացվել փարբեր միջոցներով՝ անձնական շփումներ, ՁԼՄ-ներ, տեղեկատվության նյութական կրիչներ, ուսումնական հաստատություններ, ժողովներ եւ հանրահավաքներ, փարաբնույթ ակումբներ, դասախոսություններ, ցուցադրումներ (պաստառներ) եւ այլն: Այդ միջոցները օրինական են համարվում, եթե դրանց օգտագործման ընթացքում պահպանվում են օրենսդրությամբ սահմանված կանոնները: Օրինակ, երբ բավարարվում են հանրահավաքների եւ ցույցերի անցկացման օրենքով առաջ քաշվող պայմանները:

Տեղեկությունների ազատությունը առաջին հերթին արտահայտ-

վում է յուրաքանչյուրի տեղեկություն փնտրելու և ստանալու իրավունքով:

ԶԼՄ-ների համար կիրառելի այդ իրավունքը հստակեցված է «Զանգվածային լրատվության մասին» Ռուսաստանի Դաշնության օրենքի 38-րդ հոդվածում, որը սահմանում է, որ քաղաքացիներն ունեն ՉԼՄ-ների միջոցով պետական մարմինների և կազմակերպությունների, հասարակական միավորումների, դրանց պաշտոնապար անձանց գործունեության վերաբերյալ օպերատիվ լրատվություն ստանալու իրավունք: *(Տես նաև՝ «Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» Նայաստանի Նախարարության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը՝ «Նայաստանի Նախարարության քաղաքացիներն ունեն մամուլով և զանգվածային լրատվության մյուս միջոցներով իրենց տեսակետները, կարծիքները արտահայտելու, հասարակական կյանքի յուրաքանչյուր խնդրի վերաբերյալ հրատարակել և հավաստի լրատվություն ստանալու իրավունք», ինչպես նաև՝ նույն օրենքի 4-րդ հոդվածը.*

*«Տողված 4. Տեղեկություններ ստանալու իրավունքը*

Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցները իրավունք ունեն ցանկացած պետական մարմիններից, հասարակական, հասարակական-քաղաքական կազմակերպություններից, դրանց ղեկավարներից ստանալու տեղեկություններ, եթե պահանջված լրատվության փրամադրումը չի հակասում փվյալ կազմակերպության կանոնադրությանը և սույն օրենքին»(Ն.Կ)):

Տեղեկատվության մատչելիության իրավունքը ավելի լայն սահմանում ունի «Տեղեկությունների, ինֆորմատիկացիայի և տեղեկությունների պաշտպանության մասին» Ռուսաստանի Դաշնության օրենքում: Չնայած, որ այն գլխավորապես վերաբերվում է փաստաթղթային տեղեկություններին: «Քաղաքացիները, ինչպես նաև տեղեկատվությունից մյուս օգտվողներն ունեն պետական տեղեկատվական ռեսուրսներից (գրադարաններից, արխիվներից, ֆոնդերից, փվյալների շտեմարաններից և այլ համակարգերից) օգտվելու իրավունք»:

Վերը շարադրվածից կարող ենք եզրակացնել, որ՝

ա) խոսքի ազատության իրավունքը կարող է իրականացվել տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, փարածելու ազատության ապահովմամբ.

բ) տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելը, սպանալը, փարածելը տեղեկատվական գործընթաց է, որի յուրաքանչյուր փուլում գործողության ազատության ապահովումը նշանակում է այդ ազատության ապահովումը ողջ գործընթացում:

գ) տեղեկատվական գործընթացում պետք է հավասարապես ապահովել մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների, յուրաքանչյուր անհարի տեղեկություններ փնտրելու, սպանալու եւ փարածելու իրավունքը:

դ) տեղեկատվության իրավունքը (կամ մարջեղիությունը) նույնն է, թե տեղեկություններ հաղորդելու, փրամադրելու ազատությունը, որը առավելապես վերաբերվում է մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցներին:

ե) տեղեկատվության իրավունքն այնքանով է փարածվում մարդկանց վրա, որքանով այն նպաստում է բացի մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցներից նաեւ այլ եղանակներով տեղեկություններ փարածելու ազատությանը:

Վերը բերված վերլուծության հիման վրա առաջարկում ենք ՀՀ օրենսդրությունում՝

ա) տեղեկատվության իրավունք կամ ազատություն հասկացությունը կիրառել միայն մամուլի եւ զանգվածային լրատվության միջոցների գործունեության կարգավորման առնչությամբ,

բ) «տեղեկություններ փնտրելու եւ սպանալու ազատություն» ձեւակերպման փոխարեն օգտագործել «տեղեկություններ սպանալու ազատություն» կամ «տեղեկություններ սպանալու իրավունք» արտահայտությունը, քանի որ տեղեկություններ փնտրելն ի վերջո հանգում է դրանք սպանալու ազատությանը,

գ) «տեղեկատվական իրավունքը» անհարների համար սահմանել որպես «տեղեկություններ փարածելու ազատություն»,

դ) «տեղեկատվական միջոցներ» ասելով հասկանալ ոչ միայն մամուլի եւ զանգվածային լրատվության այլ միջոցները, համակարգչային տեղեկատվական ռեսուրսները, այլեւ փաստաթղթային տեղեկությունները՝ անկախ դրանց փրամադրման կամ պահպանման ձեւից (գրավոր, բանավոր եւ փայագիր խոսքը, թղթային եւ էլեկտրոնային կրիչները, գրադարանները, արխիվները եւ այլն):

## Կարապետ Հարությունյան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՈՒՄ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՓՆՏՐԵԼՈՒ, ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՏԱՐԱԾԵԼՈՒ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համապարասխան՝

- *Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատրկանում է Ժողովրդին:* Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազապ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաեւ Սահմանադրությամբ նախատեսված պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատարանձանց միջոցով:
- Հայաստանի Հանրապետությունում պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը եւ օրենքներին համապարասխան՝ *օրենսդիր, գործադիր եւ դատական* իշխանությունների տարանջատման սկզբունքի հիման վրա:

Հայտնի է, որ ՀՀ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների կազմավորմանը ժողովուրդը մասնակցում է ուղղակիորեն (*ընտրովի մամիններ՝* Հայաստանի Հանրապետության Նախագահը, Ազգային ժողովը եւ տեղական ինքնակառավարման մարմինները) կամ միջնորդավորված եղանակով, երբ ընտրովի մարմիններն իրենց լիազորությունների շրջանակում ձեւավորում են նշանակովի մարմիններին (վարչապետ, ՀՀ կառավարության մյուս անդամներ, ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ, դրա անդամներ, գլխավոր դատախազ, դատավորներ, մարզպետներ, Երեւանի քաղաքապետ եւ այլն):

Պետություն-հասարակություն համագործակցությունը եւ փոխադարձ վերահսկողությունը քաղաքացիական հասարակության եւ

իրավական պետության հիմնարար սկզբունքներից է: Այն հնարավոր չէ պահպանել, առանց ՏՏ պետական եւ փեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին փեղեկություններ փընպրելու, սրանալու եւ փարաժելու ազափության ապահովման, ինչն ամրագրվաժ է ՏՏ Սահմանադրության 24-րդ հոդվաժով: *(եթե այդ ազափությունն օրենքով սահմանվաժ կարգով սահմանափակվաժ չէ պետական եւ հասարակական անփրանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու քարքերի, այլոց իրափունքների եւ ազափությունների, պափրփի եւ քարի համքափի պաշարպանության համար (փես՝ ՏՏ Սահմանադրության 44-րդ հոդվաժ):*

Մեջքերենք նաեւ Եվրոպայի խորհրդի նախարարների Կոմիփեի 1992 ապրիլի 29-ի «Կարժիք հայրներու եւ փեղեկափրփության ազափության մասին Տոչակագրի» հեփեյալ դրույթ՝

*«Տեղեկափրփության եւ ՁԼՄ-ների ոլորտում պետության առջեւ դրվաժ են հեփեյալ խնդիրները (II)*

*(c) պետական սեկտորում քաց փեղեկափրփական քաղաքականությունը (ներառյալ՝ փեղեկափրփության մարչեկիությունը, որն անհրաժեշտ է քաղաքացիների կողմից քաղաքական, փնփեսական, աոցիալական եւ մշակութային հարքերի ընկալման ունակության քարձրացման համար) եւ այդպիսի հարքերի ազար քննարկման հնարափորությունը»\*:*

Ակնհայտ է, որ պետական եւ փեղական ինքնակառավարման մարմինների գործունեության ամբողջ փիրույթում փեղեկություններ փնփրելու, սրանալու եւ փարաժելու ազափության ապահովման խնդիրը մեկ հոդվաժում քննարկել հնարափոր չէ: Դիփարկենք միայն օրենքների սփեղծման գորժընթացում (մշակման, քննարկման, ընդունման եւ հրապարակման ընթացքում) այդ խնդրի իրավական լուժումները:

Տիչեցնենք, որ Տայասփանի Տանրապետությունում *օրենսդիր իշխանությունը (օրենքներ ընդունելու, դրանցում փոփոխու-*

\*Թարգմանությունը հեղինակինն է

թյուններ և լրացումներ կատարելու լիազորություն ունեցող մարմինը) Ազգային ժողովն է, որը կազմված է 131 պարզամափորից: Նշենք նաև, որ Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու հնարավորություն (օրենքի նախագիծ և (կամ) նախագծերի փաթեթ ներկայացնելու իրավունք) ունեն պարզամափորները և ՏՏ կառավարությունը: Օրենքներն ուժի մեջ են մտնում Հանրապետության Նախագահի կողմից վավերացվելուց և հրապարակվելուց հետո:

*Օրենքներին, որպես իրավական ակտերին*, ներկայացվող պահանջները, ինչպես նաև դրանց մշակման, քննարկման, ընդունման և հրապարակման կարգերը հիմնականում սահմանված են «Իրավական ակտերի մասին» (ընդունված է 2002 թվականի ապրիլի 3-ին) և «Ազգային ժողովի կանոնակարգ» (ընդունված է 2002 փետրվարի 20-ին) ՏՏ օրենքներում:

«Իրավական ակտերի մասին» ՏՏ օրենքում սահմանված է Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի ստորադասությունը, դրանց մշակման, փորձաքննության, ընդունման, հրապարակման, ուժի մեջ մտնելու, գործողության, փոփոխման, գործողության դադարման, մեկնաբանման, պարզաբանման ու համակարգման ընդհանուր կարգը:

Ըստ այս օրենքի՝

- իրավական ակտը ժողովրդի, ՏՏ պետական կամ փեդական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների, ինչպես նաև իրավաբանական անձանց կամ դրանց առանձնացված ստորաբաժանումների կամ հիմնարկների՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով իրենց լիազորությունների շրջանակում ընդունած պաշտոնական գրավոր փաստաթուղթ է, որով սահմանվում են պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ կամ պարտականություններ կամ պարասխանաբարություններ կամ սահմանափակումներ կամ այլ կանոններ (վարքագծի կանոններ):

- Իրավական ակտերը իրենց բնույթով լինում են՝

ա) նորմատիվ, այսինքն՝ ՏՏ Սահմանադրությամբ եւ օրենքով սահմանված կարգով ընդունված պաշտոնական գրավոր այն փաստաթուղթը, որն ուղղված է իրավական նորմի կամ նորմերի սահմանմանը, փոփոխմանը կամ գործողության դադարեցմանը.

բ) անհատական (ոչ նորմատիվ), այսինքն՝ իրավասու մարմինների՝ իրենց լիազորությունների շրջանակում ընդունված այն իրավական ակտը, որն ունի ժամանակավոր կամ մշտական բնույթ, նախատեսված է մեկանգամյա կամ բազմակի կիրառման (օգտագործման) համար, չի պարունակում իրավական նորմ եւ սահմանում է վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակի անհատապես նշված (նախատեսված) ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ պետական կամ փետրական ինքնակառավարման մարմինների կամ պետական կամ համայնքային հիմնարկների համար.

գ) ներքին (լոկալ), այսինքն՝ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում «Իրավական ակտերի մասին» ՏՏ օրենքում սահմանված *«ներքին իրավական ակտ ընդունող մարմինների»* իրենց իրավասության շրջանակում ընդունված այն ակտը, որն ունի ժամանակավոր կամ մշտական բնույթ, նախատեսված է մեկանգամյա կամ բազմակի կիրառման (օգտագործման) համար եւ սահմանում է վարքագծի կանոններ, որոնք փարածվում են միայն անորոշ կամ որոշակի (բայց ոչ անհատական) անձանց վրա:

«Իրավական ակտերի մասին» ՏՏ օրենքի մի շարք հոդվածների (*նորմատիվ իրավական ակտերի նախագծերի նախապարտադրման ծրագրերին, նորմատիվ իրավական ակտերի նախագծերի ներկայացմանը, իրավական ակտերի փորձաքննության եւ պետական գրանցման կարգին, օրենսդրական իրավական ակտերի նախագծերի պետական իրավական փորձաքննության կարգին, իրավական ակտերի փորձաքննությունն իրականացնող անձանց իրավունքներին վերաբերվող հոդվածներին*) գործողությունը չի փարածվում Հայաստանի Հանրապետության պարզամավորների կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով մշակվող կամ ներկայացվող օրենքների կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշումների վրա:

Ըստ «Իրավական ակտերի մասին» ՏՏ օրենքի 9-րդ հոդվածի՝

- օրենքը կարգավորում է առավել կարևոր, բնորոշ եւ կայուն հասարակական հարաբերությունները, ընդունվում է ՏՏ Սահ-

մանադրությանը համապատասխան՝ հանրաքվեի միջոցով կամ ՏՏ Ազգային ժողովի կողմից:

- Օրենքով կարող է կարգավորվել ցանկացած հարաբերություն, ընդ որում միմիայն օրենքով պետք է սահմանվեն ՏՏ Սահմանադրությամբ եւ օրենքներով նախատեսված հարցերը՝ այդ թվում՝

1) ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքների եւ ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, ինչպես նաեւ պատասխանատվության տեսակները, չափերը, պատասխանատվության ենթարկելու կարգը, հարկադրանքի միջոցներն ու դրանք կիրառելու կարգը, ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կողմից վճարվող հարկերի, տուրքերի եւ այլ պարտադիր վճարների տեսակները, չափը, վճարման կարգը.

2) ֆիզիկական եւ իրավաբանական անձանց գործունեության նկատմամբ հսկողություն եւ վերահսկողություն (այդ թվում՝ սպուգում, ուսումնասիրություն, տեսչական սպուգում) իրականացնելու դեպքերը, պայմաններն ու կարգը.

3) ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու պաշտպանության կարգը եւ պայմանները.

4) ֆիզիկական անձանց անձնական եւ ընտանեկան, ինչպես նաեւ իրավաբանական անձանց՝ առեւտրային գաղտնիք չհամարվող տեղեկությունների ցանկը.

5) իրավաբանական անձինք ստեղծելու, դրանց գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու կարգը եւ պայմանները.

6) Նայաստանի Նանրապետության Նախագահի, Նայաստանի Նանրապետության Ազգային ժողովի եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կարգը.

7) Նայաստանի Նանրապետության միջազգային պայմանագրերի կնքման, չեղյալ համարելու կարգը եւ պայմանները.

8) կուսակցությունների ու այլ հասարակական միավորումների, զանգվածային լրատվության միջոցների իրավական կարգավիճակը.

9) պետական բյուջեի ձեւավորման եւ դրա ծախսման կարգը.

10) Նայաստանի Նանրապետության ազգային անվտանգության հայեցակարգային դրույթները, ռազմական դրության հայտարարման կարգը.

11) քրեական, վարչական, տնտեսական (գույքային), կարգապահական պատրասխանաբաժնի ենթարկելու դեպքերը, կարգը, պայմանները, քրեական պատիժների իրականացման կարգը, դատական եւ վարչական ակտերի հարկադիր կատարման կարգը, դատախազության եւ փաստաբանների կարգավիճակը եւ լիազորությունները:

12) տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքները, պարտականությունները եւ պատրասխանաբաժնիները:

Իրավաբանական ուժի պետանկյունից օրենքներին զուգահեռ պետք է դիտարկել նաեւ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենքի ուժ ունեցող որոշումները: Սրանք այն որոշումներն են, որոնք ՀՀ կառավարությունը կարող է ընդունել իր ծրագրի օրենսդրական ապահովման նպատակով՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից փրված *ժամանակավոր լիազորությամբ*:

Եթե այս ամենին ավելացնենք նաեւ հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածով երաշխավորվում է օրենքի գերակայությունը Հայաստանի Հանրապետությունում (*այսինքն, որ բացի ՀՀ Սահմանադրությունից եւ ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներ եւ ՀՀ միջազգային պայմանագրերից օրենքն ունի ավելի բարձր իրավաբանական ուժ, քան մյուս բոլոր իրավական ակտերը*), ապա ակնհայտ է դառնում, որ օրենքների մշակման, քննարկման, ընդունման եւ հրապարակման ընթացքում դժվար է գերազնահատել հրապարակայնության, ինչպես նաեւ հասարակության տեղեկացվածության ապահովման անհրաժեշտությունը, կարեւորությունը:

Օրենքների *մշակման եւ քննարկման* ընթացում տեղեկություններ փնտրելու, ստանալու եւ փարածելու ազատության ապահովմանն ուղղված են՝

ա) «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին կետը, *որով թույլատրվում է հասարակական եւ այլ կազմակերպությունների ներկայացուցիչներին, մասնագետներին մասնակցել օրենքի նախագծի մշակման աշխատանքներին*:

«Իրավական ակտի նախագիծը մշակող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, պետական կամ համայնքային հիմնարկը կամ իրավաբանական անձը, այդ մարմնի աշխատակիցների ու մասնագետների թվից կարող է ստեղծել նախագծի մշակման հանձնաժողով: Նախագծի մշակման աշխատանք-

ները կապարելու համար կարող են ներգրավվել նաև գիտական կազմակերպությունների, շահագրգիռ մարմինների ու կազմակերպությունների ներկայացուցիչներ, մասնագետներ»:

բ) «Իրավական ակտերի մասին» ՏՏ օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետը, *որով թույլատրվում է իրավաբանական կամ ֆիզիկական անձանց մշակել օրենքի նախագիծ:*

«Իրավաստեղծ մարմինը կարող է նորմատիվ իրավական ակտի նախագծի մշակումը հանձնարարել իրավաբանական կամ ֆիզիկական անձանց»: «Իրավաստեղծ մարմին» ստեղծվելու պետք է հասկանալ միայն ՏՏ կառավարությունը, քանի որ ՏՏ Սահմանադրությամբ եւ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՏՏ օրենքով Ազգային ժողովը որպես իրավաստեղծ մարմին նման որոշում ընդունելու լիազորություն չունի:

գ) «Իրավական ակտերի մասին» ՏՏ օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ կետը, *որով իրավաբանական կամ ֆիզիկական անձանց թույլատրվում է մասնակցել իրավաստեղծ մարմնի (տվյալ դեպքում կրկին Նայաստանի Նանրապետության կառավարության)\* կողմից հայտարարված մրցույթին, այն դրանում հաղթելու դեպքում՝ մշակել օրենքի նախագիծ:*

«Իրավաստեղծ մարմինն իրավասու է այլընտրանքային նախագծերի նախապարաստումը հանձնարարել մի քանի հիմնարկների, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց: Իրավաստեղծ մարմինն իրավասու է հայտարարել լավագույն նախագծի մրցույթ»:

դ) «Իրավական ակտերի մասին» ՏՏ օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ կետը, *որով իրավաբանական եւ ֆիզիկական անձանց թույլատրվում է իրենց նախաձեռնությամբ մշակել օրենքի նախագիծ, այն ներկայացնել Նայաստանի Նանրապետության կառավարությանը կամ պարզամտության, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով Նայաստանի Նանրապետության կառավարությունում եւ Ազգային ժողովում (Ազգային ժողովի եւ Ազգային ժողովի հանձնաժողովների նիստերում)\* մասնակցել այդ նախագծի քննարկմանը:*

«Իրավաբանական եւ ֆիզիկական անձինք իրենց նախաձեռնությամբ իրավունք ունեն մշակել եւ համապարաստան իրավաստեղծ մարմիններին ներկայացնել նորմատիվ իրավական ակտերի նախագծեր: Իրավաբանական եւ ֆիզիկական անձանց մշակած օրենքների եւ Նայաստանի Նանրապետության Ազգային ժողովի

\* Լրացումը հեղինակին է:

որոշումների նախագծերը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն ներկայացվում են օրենսդրական նախաձեռնության իրավունք ունեցող անձանց կամ մարմիններին:

Իրավաբանական եւ ֆիզիկական անձանց նախաձեռնությամբ մշակված նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակողներն իրավունք ունեն մասնակցել նախագծերի քննարկումներին:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված իրավական ակտի նախագծի հեղինակները կարող են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգով սահմանված կարգով մասնակցել համապատասխան նախագծի քննարկմանը»:

ե) «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը (*«Իրավական ակտերի նախագծերի հրապարակումը»*), որով հնարավորություն է տրվում օրենսդրությամբ սահմանված կարգով օրենքների նախագծերը հրապարակել մամուլի կամ զանգվածային լրատվության մյուս միջոցներով, ինչպես նաև դրանք դարձնել հանաժողովրդական քննարկման առարկա.

զ) «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերը, որոնցով իրավաբանական եւ ֆիզիկական անձանց թույլատրվում է տրվում հանձնաժողովի որոշմամբ (կամ հանձնաժողովի նախագահի հրավերով) ներկա գրնվել Ազգային ժողովի հանձնաժողովի նիստին եւ մասնակցել քննարկումներին:

«3. Հանձնաժողովի դռնբաց նիստում, բացի սույն հոդվածի 2-րդ կետում նշված անձանցից (*պարզամարդկեր, Հանրապետության Նախագահը, նրա լիազորած ներկայացուցիչը, վարչապետը, նրա լիազորած ներկայացուցիչը, ինչպես նաև հանձնաժողովի որոշմամբ հրավիրված անձինք*)\*, կարող են ներկա գրնվել Աշխատակազմի (*Ազգային ժողովի աշխատակազմի*)\* կառուցվածքային սպորաբաժանումների ղեկավարները, հանձնաժողովի մասնագետները (փորձագետները), հանձնաժողովի նախագահի հրավիրած եւ օրենքով նախատեսված այլ անձինք:

4. Հանձնաժողովի նիստում նախագծի կամ դրա վերաբերյալ առաջարկությունների քննարկմանն իրավունք ունեն մասնակցել արվյալ փաստաթղթերի հեղինակները»:

է) «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 8-րդ կետը՝

\* Լրացումը հեղինակինն է:

«8. Դռնբաց նիստում, բացի սույն հոդվածի 7-րդ կետում նշված անձանցից (*պարզամաշվորները, Տանրապետության Նախագահը, նրա լիազորված ներկայացուցիչը, վարչապետը, նրա լիազորված ներկայացուցիչը, Տայասրանի Տանրապետության սահմանադրական դատարանի նախագահը, Կառավարության անդամները, Տայասրանի Տանրապետության գլխավոր դատախազը, Տայասրանի Տանրապետության վճարային դատարանի նախագահը, Տայասրանի Տանրապետության կենտրոնական բանկի նախագահը, Վերահսկիչ պալատի նախագահը, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը եւ նրա կողմից սահմանված ցանկով նիստի սպասարկումն ապահովող աշխատակիցները, ինչպես նաեւ նիստը վարողի հրավիրված անձինք*)\*, կարող են ներկա գրնվել նաեւ Աշխատակազմի (Ազգային ժողովի աշխատակազմի)\* կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, Ազգային ժողովի նախագահի եւ նրա Կեղակալների խորհրդականներն ու օգնականները, մշտական հանձնաժողովների, խմբակցությունների եւ պարզամաշվորական խմբերի մասնագետները (փորձագետները), Ազգային ժողովում հավաքարմագրված լրագրողները, Աշխատակազմի (Ազգային ժողովի աշխատակազմի)\* ղեկավարի սահմանած ցանկով նիստի լուսաբանումն ապահովող աշխատակիցները, ինչպես նաեւ նիստը վարողի եւ քննարկվող հարցի գլխադասային հանձնաժողովի հրավիրված անձինք»:

Ինչպես տեսնում ենք, Ազգային ժողովի նիստը վարողի եւ գլխադասային հանձնաժողովի կողմից հրավիրված անձանց թույլատրվում է ներկա լինել Ազգային ժողովի նիստերին, որտեղ մասնավորապես քննարկվում են օրենքների նախագծերը, ինչպես նաեւ Ազգային ժողովի որոշմանք (տես՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՏՊ օրենքի 49-րդ հոդվածի «դ» ենթակետ) ելույթ ունենալ այդ նախագծերի քննարկման ժամանակ: Ծար կարելու է, որ նշված հոդվածով ԱԺ դռնբաց նիստերին կարող են ներկա լինել նաեւ այստեղ հավաքարմագրված լրագրողները, որոնք հասարակությանը ժամանակին տեղեկացնում են քննարկվող օրենքների նախագծերի մասին:

Նշենք նաեւ, որ օրենքների նախագծերն Ազգային ժողովում քննարկվում են երեք ընթերցմամբ, այսինքն՝ նույն հարցը քննարկվում է առնվազն 3 անգամ (կարող է քննարկվել 4 եւ ավելի անգամ, եթե Տանրապետության Նախագահը չվավերացնի Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքը, առարկություններ

\* Լրացումը հեղինակին է:

րով կամ առաջարկություններով այն վերադարձնի Ազգային ժողով), որը էականորեն մեծացնում է հասարակության կողմից փյալ օրենքի քննարկման գործընթացին ծանոթանալու եւ մասնակցելու հնարավորությունը:

Իհարկե չպետք է մոռանալ, որ օրենսդրական նախաձեռնության իրավունք չունեցող անձի համար թվարկված իրավունքներից օգտվելու հիմնական գործուն լծակը մնում է պարզամտությունը, որը ժողովրդի կողմից ընկալված եւ համապատասխան լիազորություններով օժտված անձ է ԱԺ-ում: Չնայած պարզամտորի մանդատը հրամայական չէ (պես՝ Սահմանադրության 66-րդ հոդված), բայց նա «Ազգային ժողովի կանոնակարգ» ՏՃ օրենքի 6-րդ հոդվածի «գ» ենթակետի համաձայն պարտավոր է ուսումնասիրել քաղաքացիներից սրացված առաջարկությունները, պարասխանել դիմումներին, այդ թվում՝ այն դիմումներին, որոնք վերաբերվում են մշակվող կամ քննարկվող օրենքների նախագծերին:

*Նրապարսկված* օրենքների վերաբերյալ փեղեկություններ փրկարելու, սրանալու եւ փարածելու ազատության ապահովմանն ուղղված են՝

ա) «Իրավական ակտերի մասին» ՏՃ օրենքի 48-րդ հոդվածը (*«Նայասարանի Նանրապերության օրենքները հրապարակելը»*), որպեղ ասվում է. *«Նայասարանի Նանրապերության օրենքները ենթակա են պարտադիր պաշտոնական հրապարակման»:*

Օրենքները պաշտոնապես հրապարակվում են «Նայասարանի Նանրապերության պաշտոնական փեղեկագրում» եւ ուժի մեջ են մտնում այդ օրենքում սահմանված ժամկետում կամ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՏՃ օրենքի 46-րդ հոդվածի՝ օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց իրավունքները կամ ազատությունները սահմանափակող կամ պարասխանափոխություն սահմանող կամ պարասխանափոխությունը խստացնող կամ պարականություններ սահմանող եւ փոփոխող կամ պարականությունների կարարման կարգ սահմանող կամ փոփոխող, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց գործունեության նկարամար հսկողության կամ վերահսկողության կարգ սահմանող կամ փոփոխող, ինչպես նաեւ դրանց իրավական վիճակն այլ կերպ վարթարացնող օրենքներն ուժի մեջ են մտնում դրանց պաշտոնական հրապարակմանը հաջորդող փասներորդ օրը, եթե փյալ օրենքով ավելի ուշ ժամկետ կամ եթե «Իրավական ակտերի մասին» ՏՃ օրենքով ուղղակի այլ

բան նախապետված չէ: Եթե ԿԿՄ-ը օրենքում ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանված չէ, ապա այդ օրենքն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակմանը հաջորդող փաստերոդ օրը:

բ) «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածը («*Նասարակությանն իրավական ակտերի մասին իրազեկելը*»), որի համաձայն իրավաբանական կամ ֆիզիկական անձանց իրավունքները կամ ազատությունները սահմանափակող, դրանց իրականացման կարգը փոփոխող կամ պարասխանաարվություն սահմանող կամ պարասխանաարվությունը խտրացնող կամ պարականություններ սահմանող եւ փոփոխող կամ պարականությունների կարգը սահմանող եւ փոփոխող, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կարգ սահմանող կամ փոփոխող կամ նրանց վիճակն այլ կերպ վարարացնող նորմատիվ իրավական ակտերը կիրառող պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են այդ մասին իրազեկել շահագրգիռ իրավաբանական եւ ֆիզիկական անձանց՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Իհարկե, այս վերջին կարեւորագույն դրույթի կարարումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեռեւս սահմանի տեղեկություններ փնտրելու, ստանալու եւ տարածելու ազատության իրականացմանն ուղղված գործուն կարգ, քանի որ դա բխում է պետության, հասարակության եւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կենսական շահերից:

## Կարապետ Հարությունյան

### ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՉԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Ըստ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 44-րդ հոդվածի՝ Կրթությանը պետք է փնտրելու, ստանալու եւ փարածելու ազատությունը (*այսուհետ՝ Կրթության ազատությունը*) «կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական եւ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների եւ ազատությունների, պատվի եւ բարի համբավի պաշտպանության համար»:

Սույն հոդվածում կրիտարկենք Հայաստանի Հանրապետությունում պետական եւ հասարակական անվտանգության պաշտպանության համար Կրթության ազատության սահմանափակման իրավական հիմքերը եւ կարգը:


Այս ոլորտում ոլորտում Կրթության ազատությունը Կրթականորեն կարող է սահմանափակվել հետևյալ երեք փորձերակներով՝



նկ. 1



նկ. 2



նկ. 3



Կրթության ազատություն



պետական եւ հասարակական անվտանգության պաշտպանության (զաղտնի) ոլորտ



պետական եւ հասարակական անվտանգության պաշտպանության ոլորտում չսահմանափակված Կրթության ազատություն

ա) Կրեդեկափության ազգաբնակչությունը սահմանափակվում է պե-  
րական եւ հասարակական անվտանգության պաշտպանության  
ամբողջ ոլորտում (նկ. 1).

բ) Կրեդեկափության ազգաբնակչությունը չի սահմանափակվում պե-  
րական եւ հասարակական անվտանգության պաշտպանության  
ոլորտում (նկ. 2).

գ) պեպրական եւ հասարակական անվտանգության պաշտ-  
պանության ոլորտում կրեդեկափության ազգաբնակչությունը սահմանա-  
փակվում է որոշ չափով (նկ.3):

«Ա» Կրեդեկափության պեպրական եւ հասարակական անվտանգու-  
թյան պաշտպանության ոլորտում բացառում է կրեդեկափության  
ազգաբնակչությունն ընդհանրապես, այսինքն հակասում է ժողովրդա-  
վարական սկզբունքներին, հիմնականում բնորոշ է բռնապե-  
պրական թեժիմներին (օրինակ՝ Խորհրդային Միությանը): «Բ» Կրե-  
դեկափության պեպրական եւ հասարակական անվտանգության պաշտպան-  
ության ոլորտում նախատեսում է կրեդեկափության բացարձակ  
ազգաբնակչություն, որին փոխանորդ են հնարավոր է հասնել պեպրության  
